ՆՈՐ-ԴԱՐ

№ 159 ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ 2 Սեպտեմբերի 1895 Շաբաթ 2 Սեպտեմբերի ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 159

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., համարը՝ 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.— Հայոց խնդիրը և Եւրոպան։
Վերջապէս։
Դաւադրութիւն սուլթանի կեանքի դէմ։
Քրոնիկոն.—Վեհ. Կաթողիկոսը Երևանում։ Ալեքսոյի բանտից արձակուած հայեր։ Թիֆլիսի նահանգապետը։ Մահմադ-խանի արշաւանքի հարիւրամեակը։ Վերահսկողութիւն բարեգ. ընկերու. իւնների վրայ։ Գողեր Թուրքաստանում։ Միսաք Բեգ-կեր։ Կառքերի անցուդարձը Վերայի կամրջի վրայ։ Շամախուց։ Հաղբատից։ Մադրասայից։
Շամախու թեմում հիմնուելիք հոգևոր դպրանոցի առթիւ։
Գործակատարների պահովութեան խնդիրը։
Թղթակցութիւններ.— Նամակ Թիւրքիայից—Կ. Պոլիս (2 նամ.)։ Mars-ի և Amicus-ի։
Քաղաքական.— Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Հեռագիրներ։
Բանասիրական.— Հայեր և քրդեր։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 1 սեպտեմբերի 1895 թ.

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԵՒՐՈՊԱՆ

—

Դրեթէ մի տարի է, որ աշխարհը զբաղուած է Հայոց խնդրով։ Բայց այսօր այդ խնդիրն իւր զարգացման զանազան շրջաններով անցնելով, հասել է այնտեղ, որ ոչ լուծւում է և ոչ էլ հերթական խնդիրների շարքից հանւում։

Այն ժամանակից, որ երեք մեծ տէրութիւնների ներկայացուցիչները Բ. Դրան ներկայացրին Հայաստանի վերանորոգութեան ծրագիրը, Հայոց խնդիրը դիպլոմատիկական կանոնաւորութիւնից չէ վերացւում։ Ընդհակառակն Սոլսբըրիի անգլիական կառավարութեան ղեկն իւր ձեռքն առնելուց, Գլադստոնի և գաւհաւեան ճառից յետոյ, Հայոց խնդիրն եւրոպական ընդհանուր հետաքրքրութեան խնդիր է դարձել։

Եւ նրանք, որոնք չէին ուզում ճանաչել Հայոց խնդիրը, ակամայ ուշադրութեամբ հետեւում են այդ խնդրի ընթացքին։ Չկայ այսօր հրապարակի վրայ մի քաղաքական խնդիր, որի համար կարելի լինի ասել, եթէ ոչ բոլոր, գոնէ շատ, տէրութիւններ կարող էին համաձայնել, այն ինչ Հայոց խնդիրն այսօր այն եզական խնդիրն է, որի մէջ, այսինքն Հայերի օգտին լուծումը ցանկանում է ամբողջ Եւրոպան ամբողջ լուսաւոր աշխարհը։

Ամբողջ Եւրոպա ասելով միմիայն ժողովուրդները չենք ուզում ասել, այլև եւրոպական կառավարութիւնները, այլև եւրոպական հասարակաց կարծիքն արտայայտող մամուլը։

Ի հարկէ, կան ամեն տեղ մարդիկ, թերթեր, որոնք դէմ են, որ Հայերը ստանան նոյն իսկ այն, ինչ որ երեք տէրութիւնները պահանջում են Բ. Դռնից և պաշտպանում են Թիւրքերին, բայց դրանք կամ կաշառուած են, կամ ի նկատի ունեն ուրիշ հաշիւներ, կամ փարձկան թերթեր են։

Այսօր, բացի երեք տէրութիւններից (Անգլիա, Ռուսիա և Ֆրանսիա), որոնք համաձայնուել են միասին գործելու, եւրոպական բոլոր միւս տէրութիւններն այսպէս թէ այնպէս համաձայն են, որ Հայաստանը ստանայ իրեն խոստացուած վերանորոգութիւնները։

Չկայ մէկ տէրութիւն, որ հակառակի այդ բանին։ Բոլոր և ամեն երկրի թերթեր այսպէս թէ այնպէս խորհուրդ են տալիս, պահանջում են, որ Հայաստանը բարեկարգուի, որ Բ. Դուռն ընդունէ և գործադրէ տէրութիւնների առաջարկած վերանորոգութիւնների ծրագիրը։

Տէրութիւնների և մանաւանդ նշանաւոր թերթերի այս համաձայնութեան շարժառիթները կարող են տարբեր լինել։ Ոմանք Հայոց ճանաչելով են այդ կամենում, ոմանք Հայոց արդար դատն են պահանջում, ոմանք Թիւրքի շահերն ի նկատի առնելով միայն Հայերի օգտին են խօսում, ոմանք էլ երկիւղից՝ թէ մի գուցէ Հայերին աւելի շատ բան տան, պահանջում են և այն էլ խիստ շտապով, որ Բ. Դրան առաջարկած ռեֆորմների ծրագիրը գործ դրուի։

Մեզ համար միենոյն է թէ ինչ շարժառիթից են Հայոց օգտին խօսում և բոլորն էլ համաձայն են Հայոց խնդրի լուծման վերաբերութեամբ։ Նշանաւորը, յոյժ նշանաւորն այն է, որ բոլոր տէրութիւններն և եւրոպական ու ամերիկական մամուլն իւր զօրաւոր և ընտիր ներկայացուցիչների բերանով համաձայն են, որ Հայոց խնդիրն անհրաժեշտ է լուծել և այն՝ Հայոց օգտին։

Այս ընդհանուր համաձայնութեան, այս ընդհանուր միութեան, այս ընդհանուր պահանջի դէմ ինչ պիտի կարողանան անել թիւրքական դիպլոմատները։

Միմիայն Թիւրքի թշնամին կարող է դիմադրելու քաջալերել Թիւրքերին։ Այն ինչ օսմանեան կայսրութեան բարեկամը պիտի ցանկայ օր առաջ կատարել այն արդար պահանջը, որ Եւրոպան Հայերի օգտին դնում է Բ. Դրան առաջ։

ՎԵՐՋԱՊԷՍ...

«Ռուսական հեռագրական Գործակալութիւնը» սեպտեմբերի մէկից Կ. Պոլսից հեռագրում է մեզ.

Օգոստոսի 31-ին ռուսաց և ֆրանսիական դեսպանները Թուրխան փաշայից տեղեկութիւն ստացան Օսմանեան Կառավարութեան զիջումների մասին Հայաստանի ռեֆորմների վերաբերութեամբ։ Իսկ անգլիական դեսպանը, գտնելով, որ զիջումներն արդէն ուշացրած են, առաջարկեց Բ. Դրան այդ առթիւ անմիջապէս դիմում անել Լոնդոն։ Բ. Դուռը համաձայնեցաւ հայկական գործերի գլխաւոր կոմիսարի հաստատութիւնը, որը անմիջական յարաբերութիւն պիտի ունենայ դեսպանների հետ. ընդունեց նաև երեք պետութեանց մայիսի 11-ին առաջարկած հաւաքական նոտայի հինգ կէտերը։ Այսպիսով Դուռն ընդունել է ամենակարեւոր առաջարկութիւնները։

ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ ՍՈՒԼԹԱՆԻ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ։

—

Բուլղարիայի լրագրների ասելով, տեղւոյն Թուրքաց դեսպանն այս օրերս մի նամակ է ստացել «Հասան քարամլու» ստորագրութեամբ, որի մէջ հաղորդւում է, թէ Բուլղարիայում գոյութիւն ունի մի գաղտնի ընկերութիւն, որի նպատակն է սպանել սուլթանին։ Այդ ընկերութիւնն իբր թէ բաղկացած է հայերից, որոնց գլուխ է անցած մին Վարդանեան, Թրքահպատակ, և թէ նպատակ ունի Ստամբուլում և նրա շրջակայքում գործած Թրքական գազանութիւնների վրէժը հանել։ Թուրքաց դեսպանութիւնն այդ նամակը յանձնել է Բուլղարիայի ոստիկանութեան ձեռքը, խնդրելով, որ քննութիւն կատարուի։ Վարդանեանն արդէն բռնուած է և բանտարկուած։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ս. Էջմիածնից մեզ գրել էին, որ Վեհ. Կաթողիկոսն օգոստոսի 25-ին ուղևորուել էր Երևան տեղւոյն թեմական դպրանոցի գործերը կարգի դնելու։ Երևանի թեմի առաջնորդ Կիւրեղ եպիսկոպոսի անակնկալ մահից յետոյ, յիշեալ դպրանոցի գործերն այնքան խառնուել էին, որ հարկաւոր էր եղել Նորին Վեհափառութեան միջամտութիւնը։ Երէկ Երևանից ստացանք մի նամակ, որի մէջ առաջ է բերուած Վեհ. Կաթողիկոսի օգոստոսի 26-ին եկեղեցում խօսած մի քարոզը դպրոցական գործերի վերաբերմամբ։ Նամակի ստորագրութիւնը մեզ անյայտ լինելով, չտպագրեցինք այդ նամակը։

—

Երէկ հաղորդեցինք, որ Ալեքսոյի բանտից արձակուած հայերից միքանիսը Պարիզ են գնացել։ Պարիզի մեր թղթակիցը գրում է, որ դրանց մէջ է չառերին յայտնի մի երիտասարդ, Ցարութիւն Ջրհանդուլեանը, և թէ հրաշք պիտի համարել, որ այդ երիտասարդը բանտի մէջ չի մեռել։ Արդէն յայտնի է Թրքական բանտերում տիրող կարգերը։

—

Սեպտեմբերի 11-ին լրանում է Կրծանիսում (Թիֆլիսի մօտ) վրաց Հերակլէ թագաւորի և աղա-Մահմեդ խանի զօրքերի միջև տեղի ունեցած ճակատամարտի հարիւրամեակը։ Այդ օրը Թիֆլիսի նահանգական ազնուականութեան պարագլուխ իշխ. Կ. Ի. Բագրատիոն — Մուխրանսկու նախաձեռ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԵՐ ԵՒ ՔՐԴԵՐ

(«Նոր-Դար»-ի Պարիզի թղթակցից)

—

Թրքական դիւանագիտութիւնը, — եթէ այդ բառը կարելի է գործածել առանց մեղանչելու արհեստի ձև ստացող այդ գիտութեան դէմ,—որի հիմունքը բացարձակ «զոռ»-բիւն և խաբէբայ-բիւն է, որի բազմապատ մանուածապատ սողոսկումները նրան աւելի վնասաբեր են եղել իրօք, քան թէ շահաբեր՝ ծառայելով իբրև միջոց լոկ ժամանակ վաստակելու համար և առ առաւել յետաձգելու, մի առ ժամանակ, այնպիսի կենսական խնդիրների լուծումն, որոնք իւր խարխուլ կեանքի ամբողջութեան ծուծը պիտի կազմէին, այլ ոչ յաջողած երբէք այդ խնդիրները չքացնել, ոչնչացնելու։ Ահա այդ դիւանագիտութիւնը, հայկական խնդիրը գոյութեան «իրաւունք» ստանալուց ի վեր, իւր ակարամիտ ներկայացուցիչների, իրենց հոգեկան աշխարհը, զգացմունքները, նոյն իսկ էութիւնը լոկ դրամի համար ի վաճառ հանող անասնաբարոյ հրապարակախօսների միջոցով երբէք չի դադարել կրկնելուց, որ հայերը մեծամասնութիւն չեն ներկայացնում այն նախատեսուած նահանգներում, ուր միայն արմատական ռեֆորմները կարող են նրանց վիճակը բարւոքել։ Հետևաբար այդ ռեֆորմները եթէ տեղի ունենան, ապա նրանք բոլորովին հակառակ կլինեն տեղական բնակիչների շահերին, որոնք գոհ են և մեծամասնութիւն են կազմում։ Ռեֆորմների այդ մեծամասնութեան և փոքրամասնութեան վրայ հիմնուած անհեթեթ գաղափարն էր, որ յառաջ բերեց հայերի սպառսպուռ, բռնաբարձ ջնջման և նրա գործադրիչ ֆակտորների ստեղծման նախամտածած, նենգամէտ, հրէշային ներքին քաղաքականութիւնը։

Երբ Ալզաս-Լոռէնի միացման խնդիրը գերման հայրենասէրների ոգեւորիչ բաղձանքն էր դարձած, շատ տարիներ առաջ, երբ դեռ Նապոլէօն III-ը նապոլէօնեան գաղափարների ուրուագծման, գործադրման պարագաների զառանցքների մէջն էր ընկղմուած, ահա այդ հեռաւոր ժամանակին Բէօկ (Burk), այդ աննկուն կամքի տէր երիտասարդը, գիտունները փոխած, ծպտուածի մախաղն ուսին, ամենայն մանրամասնութեամբ ուսումնասիրեց այդ երկու նահանգները, նրանց բնակիչների թիւը, լեզուն, բարքը, վարքը, սովորութիւնները, նրանց միտումը, քաղաքական ընկերական հայեացքները.... Եւ ոչ միայն Սէդանի ահեղ ճակատամարտից, այլ նոյն իսկ Սադովայի՝ Աւստրիային տուած վերջին օրհասական հարուածից շատ տարիներ առաջ, նրա մասնակարգած, ծրարած տեղեկութիւնները, նրա կազմած սքանչելի ժողովրդագրական վիճակագրական քարտէսները, Բիսմարկի, Մոլտկէի առաջ տարածուած, նրանց ապագայ գործունէութեան պայմանները, կէտերը որոշելու ղեկավարիչը հանդիսացան։

Հայաստանի վարար դրութիւնը չներից դեռ շատ երկար տարիներ առաջ մեզ ճանաչել և ճշտիւ որոշել մեր զօրութեան ասպարէզը, թէ Բէօկ չունեցանք.

Բայց իրողութիւն է, որ հայերս Մայր Հայաստանում, Մեծն Հայաստան, մեծամասնութիւն և փոքրամասնութիւն կազմելու խնդիրն այսօր կատարելապէս մի առասպել է դարձած։ Ոչ միայն Արևմտեան Եւրոպայի դիւանագէտներից, հրապարակագիրներից, ուսուցչապետներից շատերը հայ տարրի սակաւամասնութեան կարծիքին համախոհ են, այլ նրանք երբեմն այնքան հեռու են գնում, որ պնդում են՝ թէ այդ այդպէս է։ Գիտակցօրէն տարակուսող անձերի թիւը շատ քիչ է, դժբաղդաբար։

Պարիզում հրատարակուող, Թրքական կիսա կառավարութեան պաշտօբերան «Orient» ժուրնալի թերթիկի խմբագիրը, որ մի գրեկ*) է, սկսել է մի շարք բաց նամակներ հրատարակել մարքիզ Սոլսբըրիին ուղղուած, ուր օսմանեան տաճկական կառավարութեան միջոցով այդ ազատաբերանը ոչ միայն յանդգնում է պնդել, որ հայերը հայկական հինգ նահանգներում սակաւամասնութիւն, այլ նոյն իսկ քրդերի հազիւ վեցերորդ մասն են կազմում։ Եւ ապա, երբ խօսքն անցնում է մակեդոնական խառնակութիւններին, այդ պանդուխտը յոխորտում է. «հազիւ թաղուեցաւ հայկական խնդիրը և ահա յարուցւում է մակեդոնականը»։

En passant, թող թոյլ տրուի մեզ նկատել հելլէնների այդ անարժան զաւակին, որ թաղել հայկական խնդիրը իւր նման մկնատեղեկ հրապարակախօսների և օսմանեան ասուած պետական կառավարութեան ոյժից շատ շատ վեր է։

Կայ այնտեղ պատմութիւն, նայիր, հայը խաղաղ, հանդարտ և պատերազմիկ (guerrier) ազգ է։ Նա կենսականութեան բոլոր անհրաժեշտ պայմաններն իւր մէջ ամփոփած ունի։ Այդ, բառ երեսթին, հեղահամբոյր ազգը, երբ ըռութեն վճռել է ոտքի կանգնել՝ նա դարձած է անընկճելի և յառաջադիմական (envahissant) մի յորդան։ Այդ սակաւութիւ, բայց յաճախադէպ, բողէներին այդ պաշտելի հսկան երբեք, երբէք խոյառ յաղթուած, կործանուած չէ եղած։ Ահա այդ ազգն այսօր զարթած և ոտքի է ելած.... Այս բոլորն, ցուցէ, համեմատաբար, ոչ մի ազգի մէջ ազատութեան, անկախութեան տապով տոչորուած մի երիտասարդութիւն այնքան մեծ թիւ չի ներկայացնում, որքան բազմաթիւ ազգերի և պետութիւնների գերեզման իջնելուն քաջավարժ ականատես հայ ազգը։ Իսկ այդ երիտասարդութիւնն իւր նախահայրերի կոչը բռնած առած՝ իւր չարքերը սեղմելու վրայ է։ Տեսնենք, ո՞վ կլինի զիջանողը, տեսնենք, ո՞վ որն գերեզմանափորը կը դառնայ։ Այդ ապագան ցոյց կը տայ։ Բայց մինչ այդ. «Viellard stupide, va-t'en donner mesure au fossoyeur» *)։

Թողնենք այդ։

Այո, օսմանեան անուանած առասպելը դիւանագիտութիւնն այդ խնդրին մի անթափանցիկ քօղի ձև է տալու։ Բայց ինչպէս։ Նախ՝ երբ խնդիրը բնակիչների համեմատական թուին է դառնում, նա իսկոյն ամբողջ մահմեդակա-

*) Յոյները, այժմ ընդհանրապէս, իսկ հայրենասէրները՝ մասնաւորապէս, իրենք իրենց անուանում են հելլէններ, իսկ գրեկ (grec) անուանակոչումը նախատական են համարում։

*) «Տխմար ծերուկ, գնա գիրգ փորողին տուր, թող գերեզմանիդ չափը վերառնէ»։ «Hernani» (Victor Hugo)։

նութեամբ, Կրծանիսում հոգեհանգիստ պիտի կատարուի յիշեալ ճակատամարտում սպանուած վրաց զինուորների համար, և յետոյ—գոհաբանական մաղթանք ռուսաց Կայսերական Տան համար։ Նախ քան հոգեհանգիստն ու գոհաբանական մաղթանքը, պատարագ պիտի մատուցանուի ս. Նիկողայոս եկեղեցում։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը վճռել է վերահսկողութեան կանոնաւոր կազմակերպութիւն սահմանել բարեգործական ընկերութիւնների գործունէութեան վրայ գաւառներում. վերահսկողութիւնը յանձնուելու է նահանգապետների և քաղաքապետների դիւաններին։

—

Լուսաւորութեան մինիստրութիւնը վճռել է Թուրքաստանում ռուս-տեղական տարրական դպրոցներ բանալ հանրակացարաններով։ Դպրոցներ բացուելու են Կոկանդ, Սամարղանդ և Կորմակչի քաղաքներում։

—

Ներկայումս Բաղւումն է 60 տարեկան մի անգլիացի, միստր Բեդեկեր, աստուածաբանութեան դոկտոր, որն իր ամբողջ կեանքն ու կարողութիւնը նուիրել է թշուառ բանտարկեալներին։ Նա եղել է եւրոպական պետութիւնների չատ բանտերում, այժմ շրջում է Ռուսիայում, որ առանձին ուշադրութիւն է դարձրել Կովկասի վրայ, որովհետև այստեղ բազմազան ցեղեր լինելով հարուստ ասպարէզ է ներկայանում նրա գործունէութեան համար։ Նա իր հետը տան է ածում մեծ քանակութեամբ խաչեր, աւետարաններ ամեն լեզուով, նոյնպէս և աստուածաբանական գրքեր, և երբ հատնում է այդ բոլորը՝ նորերն է ձեռք բերում բաժանելու։ Տեղացիներին քարոզելիս նա խօսում է իր հետ ունեցած մի թարգմանի միջոցով։ Միստր Բեդեկերը Բաղուից, «Կասպի»-ի ասելով, մտադիր է գնալ Շամախի, Շուշի, Գանձակ և այլն և ապա Հիւսիսային Կովկաս և Դաղստան։ Այստեղից էլ նա գնալու է Սիբիր, ուր մտադիր է մնալ ոչ պակաս քան մի տարի։

—

Յայտնի է, որ Վերայի կամրջի վերայ կառքերի անցուդարձի համար որոշ վճար է առնւում. մինչև անգամ այդ վճարն առանց տոմսակի էր լինում. սեպտեմբերի 2-ից վճարը առաջին տոմսակ պիտի տրուի կամրջի մի ծայրին, իսկ միւս ծայրին տոմսակը յետ պիտի առնուի։ Քաղաքային վարչութիւնն այդ ձեր մտցրել է կոնտրոլի ենթարկելու համար կառքերի անցուդարձը յիշեալ կամրջի վրայ։

—

ՇԱՄԱԽՈՒՑ.—Տեղերիս յաճախ տեղացող անձրևների, Շամախում եղանակներն աշնանային են. գաւառիս մալական գիւղացիք դեռևս չեն վերջացրել կալերի գործերը. չատերն անհնարին գտնելով այլ ևս չարունակել այդ գործերը, ցորենի խուրձերը դիզելով, թողնում են գալ տարուայ համար։ Վերջին անձրևների ժամանակ կարկուտից վնասուեցան գաւառիս Սաղեան և Գիրջիլար հայաբնակ գիւղերի խաղողի այգիները։

—

ՀԱՂԲԱՏԻՑ.—Գիւղական ուսուցիչ Եղիշէ Երզնկեանցը օգոստոսի 25-ին թոքերի բորբոքումից կնքեց իր մահկանացուն և օգոստոսի 27-ին համեստ թաղուեցաւ հռչակաւոր Հաղբատայ վանքի գաւթում 34 տարեկան հասակում։ Լօռու գաւառի շրջակայ գիւղերից ներկայ էին համեստ գործչի յուղարկաւորութեանը չատ մարդիկ։ Հանգուցեալը իր սկզբնական ուսումն ու կրթութիւնը ստացել էր յիշեալ վանքի վանական դպրոցում, որ այսօր փակ է, ապա պատրաստուելով հայկաբան Ռուստամբէկ Երզնկեանի մօտ՝ մտաւ Ներսիսեան դպրանոցը և ուսանելով մանկավարժութիւնը հանգուցեալ Առաքել Բահաթրեանի օրով, նուիրեց իրեն ուսուցչութեան։ Նա տասներկու տարի ծառայել է Թիֆլիսի ս. Դայիանեան, Քութայիսի, Նուխու, Կարս, Օձուն և Շնող քաղաքների և գիւղերի հայ ուսումնարաններում ուսուցչական պաշտօնով։ Նա իր քաղցր բնաւորութեամբ, չիտակութեամբ և սրախօսութեամբ սիրելի է եղել ամեն տեղ, ուր ծառայել է և այսօր էլ նրա յիշատակը և «Եղիշէ վարժապետ» անունը կայ և յիշւում է։ Նա սիրում էր գիւղական կեանքը և գերադասում էր գիւղական ուսումնարաններում ծառայելը։

Նա ժողովում էր ձմեռները գիւղացիներին օդաներում և զրոյցներ էր անում հասկացնելով գիւղական կեանքի խորհուրդը։ Նա կանոնաւոր երգեցողութեան և ձայնագրութեան տարածման համար բաւականին գրել է մեր պարբերական թերթերում թէ իր անուամբ և թէ Ռ—ւ—ջէ, Ռ—ւ—ջեն չոյնաքրոնեան, Զոյնաքրաքեր, Լօռեցի, Հողքարեցի ստորագրութիւններով։ Նա ունի բաւականին հարուստ գրադարան, որը կազմել է իւր ստացած չնչին ռոճիկից խնայած միջոցներից։ Ունի միքանի գրաւոր անտիպ աշխատութիւններ գիւղական կեանքին վերաբերեալ, որոնց մէջ նշանաւոր է մի ժողովածու։

Հանգուցեալը մի առանձին սէր ունէր դէպի մեր վանքերը և նախանձախնդիր էր նրանց պայծառութեան ու անխախտ պահպանութեան, որոնք անխնամ թողուած էր տեսնում մեր պորտապոյծ վարդապետներից, որոնք չինելու տեղ քանդում են և քարերը ծախում են գերեզմանաքարերի համար գիւղացւոց վրայ։ Հանգուցեալը վերջերս ցանկութիւն յայտնեց կուսակրօն դառնալու և դիմեց հայոց Հայրիկին։ Նորին Վեհափառութիւնը ընդունելով նրա խնդիրը՝ հրամայել էր ձեռնադրել նրան միաբան նշանաւոր Սանահնու վանքի. բայց դեռ հրամանը չիրագործուած [illegible]։ Հանգիստ ոսկերացդ, գիւղական ազնիւ ուսուցիչ, քո յիշատակը միշտ անմոռանալի կմնայ այն տեղերում ուր դու համեստաբար գործել ես։

—

ՄԱԴՐԱՍԱՑԻՑ. (Շամախու գաւառ)։—Օգոստոսի 26-ին, գիշերը ժամը մէկին երեք լեզգի-ծառաներ յարձակուեցան գիւղիս հարուստ Դ.-ցի տան վրայ, կողոպտեցին տանելով մօտաւորապէս 2000 րուբլու ոսկեղէն, արծաթեղէն, փող, զէնքեր և այլ իրեղէններ։ Ոստիկանական քննութիւնից երևաց, որ կողոպտողները եղել են մէկը տան տիրոջ ծառան, երկու ուրիշ լեզգի-ծառաների մասնակցութեամբ։

Գիշերը, ժամը մէկին տան տիրոջ ծառան, օգտուելով տիրոջ որդու բացակայութիւնից, մտնում է տիրոջ ննջարանը, զարթեցնելով նրան մի դանակ է ուզում. տան տէրը դուռը բաց է անում և տալիս է ծառային դանակը, այդ միջոցին միւս երկու ընկերները պատրաստուած մտնում են ներս տիրոջ ննջարանը։ Չարագործներից մէկը բռունցքով հարուածում է տան տիրոջ գլխին, որից նա ուշաթափ է լինում. այնուհետև նրանք փող են պահանջում. տան տէրը հանում է գրպանից 200 րուբ. և տալիս նրանց, սակայն չարագործները, չբաւականանալով այդ գումարից, յարձակւում են սնդուկում դրած արկղի վրայ, որը կոտրելով վերցնում են միջի եղած բոլոր արծաթեղէն ու ոսկեղէն իրեղէնները և զուտ դրամ 600 րուբ. և իսկոյն անյայտանում են։ Միւս օրը եղելութեան մասին յայտնում են Շամախու գաւառապետին, որը իսկոյն խիստ միջոցներ է գործ դընում չարագործներին գտնելու. երեկոյեան դէմ ոստիկանութեան յաջողւում է ձերբակալել չարագործներից մէկին։ Այդ մասին արդէն սկսուած է հարկաւոր քննութիւն։

ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄՈՒՄ ՀԻՄՆՈՒԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ԱՌԹԻՒ.

—

I.

Ռուսիայի հայոց վեց թեմերից երկուսը—Աստրախանի և Շամախու թեմերը մինչև օրս իրենց համար սեփական թեմական հոգևոր դպրանոց չունեն։ Այն ինչ, ըստ օրէնի, իւրաքանչիւր թեմ կարող է և պիտի ունենայ իւր թեմական դպրանոցը։ Վերջին տարիները միտք յղացաւ յիշեալ երկու թեմերումն ևս թեմական դպրանոց բանալ, բայց թէ թեմերի որ քաղաքում բանալ, այդ մասին թեր և դէմ կարծիքներ լսուեցան։ Անցեալ տարի երբ Աստրախանի թեմի համար հիմնուելիք թեմական դպրոցի առթիւ լրագրութեան մէջ թեր և դէմ յօդուածներ էին լոյս տեսնում, մէկն առաջարկում էր Մոզդոկում հիմնել, միւսը Արմաւիրում, երրորդը Կիզլարում և այլն։ Մենք, որ ի մօտոյ ծանօթ էինք տեղագրութեանը և պայմաններին, հիմնաւոր փաստերով առաջարկեցինք (տես «Նոր-Դար» 1894 թ. կարծեմ №№50-51), որ թեմական դպրանոցը հիմնուի Աստրախան քաղաքում և, ինչպէս յայտնի է, այդ հարցն արդէն լուծուած է և թեմական դպրանոցը Աստրախանում պիտի բացուի։

Այժմ, երբ հարց է բարձրացել (ոչ լրագրութեան մէջ այլ ի մասնաւորի) Շամախու թեմի համար բացուելիք դպրանոցի մասին, գործի յաջողութեանը միրուխանն ծառայած լինելու համար՝ կամենում ենք մեր կարծիքները յայտնել։

Ով որ ի մօտոյ ծանօթ է Շամախու թեմի և նրա կարիքներին, նա կհամոզուի թէ որքան մեծ նշանակութիւն ունի թեմական դպրանոցը, այդ թեմի համար։ Մտէք գիւղերը և տեսէք թէ ո՞վքեր են գիւղական քահանաները։ Դուք կտեսնէք քահանաներ, որոնց գիտութիւնը միայն թաղելու, և երեխայ մկրտելուց դէնը չէ անցնում...որոնք կատարեալ անգրագէտ են և անընդունակ որևէ գործի...

Բաւական է յիշել, որ գիւղերում մի յարմար քահանայ անգամ չէ գտնւում, որ հարկաւոր դէպքում կարելի լինի նրան գործակալի պաշտօն յանձնել կամ որևէ յանձնարարութիւն անել. և այս պատճառը, որ եղած գործակալները տասնեակ տարիներով չեն փոխւում և [illegible] կառավարում են։

Դեռ չեմ յիշում այն հանգամանքը, որ բազմաթիւ գիւղեր քահանաներ չունեն և ներկայումս կոնսիստորիան էլ յարմար քահանայացուներ չունենալով դժուար կացութեան մէջ է...Սաղեանի վանքում ընծայարան կայ, բայց դա նոր է հիմնուած և, ի հարկէ չի կարելի սպասել, որ նա թեմական դպրոցի չափ օգտաւէտ լինի։

Շամախու թեմի հոգևոր գործերի կերպարանափոխութիւնը և բարւոքումը կախուած է բացառապէս թեմական դպրոցից։ Վերջապէս ժամանակ է լուրջ կերպով վերաբերուելու այդ գործին։ Շատ ուրախալի է, որ այդ հարցը այժմ հրապարակի վրայ է։ Բայց այստեղ էլ, ինչպէս վերև յիշեցի, Աստրախանի նման հարց է ծագել թէ Շամախու թեմի թեմական դպրոցը ո՞րտեղ պիտի հիմնուի, Բագու քաղաքո՞ւմ թէ Շամախում։

Շատերը, որոնք գործի կողմը չօշափել չեն կամենում, ցանկանում են որ թեմական դպրանոցը Բագւում հիմնուի, որովհետև այդ քաղաքը հարուստ է, դպրանոցի համար յարմար չինութիւն ունի, «Մարդասիրական ընկերութիւնը» տարեկան երեք հազար րուբլի նպաստ է տալու (չատ քիչ է), որովհետև տեղական եկեղեցիները հարուստ եկամուտներ ունեն և կարող են նպաստել թեմական դպրոցին (այդ եկեղեցիները պարտաւոր են նպաստելու և այն դէպքում, երբ դպրանոցը Շամախում հիմնուի), որովհետև համալսարանական երիտասարդներ կան, որոնք հոգաբարձու ընտրուելով կարող են աւելի արդիւնաւոր լինել (ինչպէս մինչև այժմ արդիւնաւոր են եղել, թէկուզ Ներսիսեան դպրանոցում) և այսպիսի չատ որովհետևներ...

Բայց գործի հանգամանքների հետ լաւ ծանօթ եղողները պնդում են, որ թեմական դպրանոցը պիտի Շամախի

նութեան, մեւսլիմանութեան առաջ դնում է միայն հայութիւնը, այն էլ միայն լուսաւորչականները, իսկ օտարադաւան հայերի՞ բաց են թողնւում։ Բայց այդ թուերը ո՞րտեղից են վեր առել, քանի որ վիճակագրութեան ստուերն անգամ գոյութիւն չունի օսմանեան անգամահատուած պետութեան մէջ։ «Համբաւէ» վկայագրերով, գըլխահարկերի ցուցակով։ — Բայց այդ և դրանց նման միջոցներն այնքան ստապատիր, անստոյգ են, որ որևէ խղճամիտ վիճակագրող կըզգուշանայ նրանց ուշադրութեան առնելուց անգամ, ուր մնաց թէ նրանք ծառայէին իբրև արժէք ունեցող գրաւոր հաւաստիք։ Ո՛չ միայն առանձին առանձին անհատներ, այլ ամբողջ հայ ընտանիքներ կան, որ «համբաւէ» վկայագրերի սիստեմը չեն ճանաչում, և չատ լաւ են անում։ Տուր մէկ ղուրուշ տարիներով ռոճկի երես չտեսած, անօթութիւնից մեռկզուացող օսմանեան գըրել—կարդալ չգիտցող կլխի պաշտօնեաներին և նա ամբողջ մի ընտանիքից երկու կամ երեք հոգու գոյութիւն ցոյց կըտայ օսմանեան երադապատում վիճակագրութեան առաջ։ Բայց և կան քիւրդերի ամբողջ ցեղեր, որ «համբաւէ» չունեն։ Ուրեմն ո՞րտեղից են ստուգապատում թուանշանները։ Փակուել հարեմի մէջ և երեւակայական թուանշաններ սարքել, ըստ քմահաճոյից, փաստ, վիճակագրութիւն չէ։ Այդ միայն օսմանեան վիճակագրութիւն է, այդ սախսոսի ստութեան չարք է, այդ հարեմաբնի հարեմական հաւիկների տաղումն է։ Երկրորդ՝ եթէ մահմեդականութիւնը կչռի մի նժարի մէջն է դրւում, միւսի մէջ չպիտի լինի քրիստոնէութիւնը։ Այդպէս չէ։ Իսկ եթէ միայն լուսաւորչականները հայ են, իսկ բողոքականները, կաթոլիկները և ամբողջ քիւրդ ցեղերը՝ որ լեզուով, սովորութիւններով, կենցաղավարութեամբ բոլորովին հայ և միայն առերես մահմեդականութիւն ընդունած,—հայ չեն, ապա ի՞նչ հիմամբ մահմեդականներ են ընդունւում քըրդերի ամբողջ ցեղեր՝ որ ո՛չ միայն Ջէննեթի հիւրի փարիների սիրով չեն տոչորւում, այլ Մահամմէդի անունն անգամ չեն ուզում լսել։ Բայց այնտեղ կան ամբողջ ցեղեր, որ քրդական բարբառ ունենալով հանդերձ, բացայայտօրէն հակամահմեդական են։ Սրանք օսմանեան ստուգապատում վիճակագրութեան ո՞ր սիւնեակի մէջ պիտի գետեղուին։

Վերջին ռուս-թրքական պատերազմի ժամանակ ամբողջ քիւրդ գիւղեր, ցեղեր, թէ Բասենում, թէ Ալաշկերտում և թէ Բուլանղում, դուռնդռունդ լցւում էին հայ օդաները և յայտարարում պնդելով՝ որ իրենք հայ են և իրենց հայ են համարում։ Եթէ Հայաստանի վարպարած վիճակը բարւոքուի՝ ապա ոչ թէ նա մի տարասեռ տարր չի բովանդակել իւր մէջ, այլ ամբողջապէս բաղկացած կլինի մի [illegible]։

Իսկ եթէ ռեֆորմների իրագործման դժուարութիւնը, որ մի անհեթեթ գաղափար է, կախումն ունի բնակիչների թուից*), ապա մի չատ գործնական, արդիւնաւոր միջոց կայ, այն է՝ լինել անկողմնապահ, կազմել միջազգային վիճակագրողների մի խումբ և արդիւնքը թող ծառայէ իբրև հիմունք ապագայ լինելիք ռեֆորմների։

Մենք հայերս, այդպիսի մի ձեռնարկութեան ո՛չ միայն կողմնակից պիտի լինենք, այլ, ի հարկին, պաշտպան։ Վստահ լինենք ամենայն վստահութեամբ, որ Մեծ Հայաստանում, ուրիշ խօսքով՝ հայկական հինգ նահանգներում, ո՛չ միայն հայերս մեծամասնութիւն ենք կազմում, այլ այդ մեծամասնութիւնը ջախջախիչ է։

Տողերիս գրողն այդ նահանգները (Բարձր Հայք, Վասպուրական, Տուրուբերան, Աղձնիք, Մոփք) մի առ մի այցելել և նրանց մէջ երկար ժամանակ ապրել է։ Եւ վստահութեամբ կարող եմ ասել, որ Հայրենեաց սուրբ բեկորների մէջ, հայութիւնը ներկայացնում է բնակիչների անկշռելի հիմունքը։ Այդ մասին ամենափոքր կասկած անգամ թող չլինի։

Թուրք, տաճիկ տարրն արդէն չատ քիչ է Հայաստանում։ Նա հաստատուած է աւելի քաղաքներում, իսկ թուրք գիւղեր չատ քիչ կան։ Իսկ ընդհանուր տաճիկ տարրը՝ մի անփոյթ լինելիք (négligé) թիւ է ներկայացնում՝ հայի առաջ. Գալով քիւրդերին, եթէ նրանք, ըստ երևոյթին, բազմաթիւ են ներկայանում Հայաստանում, այդ գլխաւորապէս, և միայն, կախումն ունի նրանց կենցաղավարութեան պայմաններից։ Քիւրդը թափառական ցեղ է, ըստ մեծի մասին, նա ո՛չ մի տեղ չէ, բայց ամենուրեք է։ Եթէ մի տարի նա իւր բնակութիւնը հաստատում է Սասունի Բասենից մինչև Բիւրակն, ապա հետևեալ տարին նա անցնում է Ալաշկերտ, Բուլանըղ, Մուշ...

Այսօր քրդական գիւղերի բազմաթիւ աւերակներով Հայաստանի բոլոր նահանգները լի են, որոնց նախկին բնակիչները, եթէ սովամահ չեն եղել, ապա գաղթել են մի նահանգից այլ նահանգ։ Ընդհակառակը, յանկարծ տեսնում ես, որ չսպասած տեղը սունկի պէս բուսնում են քրդական խղկներ՝ որոնց գոյութիւնն առաջ ոչ ոք չգիտէր։ Նոյն քիւրդ ցեղը և՛ Մոփաց աշխարհումն է, և՛ Տուրուբերանում, և՛ Բարձր Հայքում, նայելով թէ երբ և տարուայ ո՛ր եղանակին։ Քիւրդերի փռուած, ընդարձակ ծաւալը թուի մեծութեան, քանակութեան հետ գործ չունի։ Մի ընդարձակածաւալ լեռնադաշտի մէջ սփռուած հինգ-տասը քիւրդ գիւղի բնակիչների ընդհանուր թիւը՝ հազիւ համապատասխան լինի նոյն տարածութեան մէջ պարփակուած մի կամ երկու հայ գիւղի բնակիչների թուին—Հայ գիւղացիք անձնական պաշտպանութեան համար ստիպուած են աւելի մեծ թուով խմբեր կազմել, քան թէ քիւրդերը։ Հայերն աւելի հոծ, կողք կողք են, ըստ կարելւոյն, իսկ քիւրդերը նօսր, ցրուած։ Եւ երբեք չի պատահել, որ երկու տարրի հաւաքական ոյժերի բաղդման միջոցին, գէթ ամենափոքր չափով հաւասար պայմաններում քիւրդը [illegible] տեղիք տուած չլինի և մարտի դաշտը թողած։ Շատերից մի երկու օրինակ։

(Վերջը միւս անգամ)

Ս. Սապահ-Գիւլեան

Պարիզ, 21 օգոստոսի (ն. տ.)

*) Միթէ անգլիական self-government-ի կամ ամերիկական township-ի սկզբունքներով ռեֆորմներ չէր կարելի գործադրել, եթէ Թուրքն իրաւ այդ ցանկանում է։

քաղաքում հիմնուի և Շամախին մեծ առաւելութիւններ և յարմարութիւններ ունի։

Մենք էլ նոյն կարծիքի լինելով, աշխատենք ապացուցանել այդ, որքան կըներեն լրագրի սիւնակները…

Ամենքին յայտնի է, որ մեր Թեմական դպրոցների միակ նպատակն այն է, որ արժանաւոր քահանայացուներ և ուսուցիչներ պատրաստէ…Եւ երբ Թեմական դպրոցի միակ նպատակը քահանայացուներ պատրաստելն է՝ շատ բնական է, որ բացուի հարուստները և ոչ-հարուստները, որոնք ձգտում են իրենց որդոց փաստաբան, բժիշկ, ուսուցիչ և այլն տեսնել, նրանք իրենց որդիքը չեն տալու Թեմական դպրոց, ինչպէս չեն տալիս նրանք հայոց ծխական դպրոցները, ժամանակի կորուստ համարելով իրենց երեխաների այնտեղ դաստիարակելը։ Բագուի Թեմական դպրոցը չի կարող բաւարար աշակերտ ունենալ, որա ապացոյցն այն է, որ ներկայումս եկեղեցական ծխական դպրոցի վերջին բաժանմունքների աշակերտները համեմատական թիւ չեն կազմում, առաջին երեք բաժանմունքների հետ։

Աշակերտը մի փոքր մեծանում է թէ չէ ծնողներն ուղարկում են արքունական դպրոցները, քաջ գիտենալով, որ իրենց որդիքը այդ դպրոցներն աւարտելով միայն կարող են հաց ճարել և ապագայ ունենալ։ Բագուի հաշակաւոր (ծախսերի համար ենք ասում հաշակաւոր) եկեղեցական երկդասեան դպրոցը, որ տարեկան մօտ 7000 րուբլի է ծախսում, չէ կարողանում եկեղեցու համար իւր աշակերտներից երգեցիկ խումբ պատրաստել և այժմ զանազան կոմպոզիտորներին է յանձնում մասնաւոր անձերից եկեղեցու համար երգեցիկ խումբ պատրաստել։ Ինչու. Որովհետև եկեղեցական դպրոցում յարմար և հաստատուն աշակերտներ չկան։ Աշակերտների մեծագոյն մասը երրորդ կամ չորրորդ բաժանմունքից դուրս է գնում և մտնում է, ինչպէս ասացինք, ռէալական կամ կլասիքական դպրոցը, որովհետև այնտեղ ապագայ կայ։

Ո՞վքեր են ուսանում Բագուի եկեղեցական դպրոցներում, միայն և եթ աղքատ դասակարգի որդիքը—մի դասակարգ՝ որ իւր օրական հացը Բագուի պէս սուղ տեղում հազիւ է հայթհայթում։ Այստեղից պարզ երեւում է, որ Թեմական դպրոցի աշակերտները՝ շատ չնչին բացառութեամբ, Բագուի աղքատ դասակարգի որդիքը պիտի լինին և մեծ մասամբ Շամախու գաւառի հայ գիւղերի գիւղացիների որդիքը։ Երբ այսպէս է, Թեմական դպրոցը պիտի ծառայէ գիւղացիներին և պիտի հիմնուի այնպիսի տեղ, որ մօտ լինի գիւղերին։

Այժմ տեսնենք թէ Շամախու գաւառի հայ գիւղերի գիւղացիները, ունե՞ն յարմարութիւն իրենց որդոցը Բագու ուղարկելու։

Տ. քահ. Մարտղեան։

ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Մենք դարձեալ գրում ենք այս խնդրի մասին հայկական այն առածի հիման վրայ, թէ, «մինչև մանուկը չլայ, մայրը կաթ չի տայ»։

«Նոր-Դար»-ի № 134-ում լոյս տեսած «Գործակատարների դրութիւնը Մերվում» յօդուածն ամբողջովին իւր մէջ պարունակում է «գործակատարների ապահովութեան» խնդրի բողոքը՝ Յօդուածում գեղեցիկ կերպով նկարագրուած էր հայ գործակատարների կրած բռնութիւններն և զրկանքները. խիղճը արթուն ընթերցողը չի կարող առանց խղճահարուելու կարդալ այդ նկարագիրը։ Բայց հայ գործակատարն ոչ թէ միայն ապահով չէ Անդրկասպեան երկրի մի խուլ անկիւնում, Մերվ քաղաքում, այլ և նոյն իսկ Անդրկովկասի «լուսաւորութեան կենդրոն» Թիֆլիսում։ Բայց մի՞թէ հայ գործակատարներն արժանի չեն ապահովութեան. ինչու Պետերբուրգի, Մոսկուայի, Խարկովի, Օդեսայի, Ռոստովի և ուրիշ քաղաքների գործակատարների ապրուստն ապահոված պէտք է լինի, իսկ Կովկասի մայրաքաղաք կոչուող Թիֆլիսի գործակատարները միշտ էլ ենթակայ պիտի լինին անապահովութեան։

Ռուսիայի վերոյիշեալ քաղաքներում հիմնուած են գործակատարների զանազան ընկերութիւններ, որոնք կրում են «արտել» անուն և որոնց անդամակցող գործակատարներից շատերին դուք կըհանդիպէք Անդրկովկասի նշանաւոր քաղաքներում։ Անդրկովկասում գոյութիւն ունեցող օտարերկրեայ առևտրական տներն իրենց ապրանքները կամ փողերը գողանալու վտանգից աւելի ապահովելու համար, հաւատ չընծայելով Թիֆլիսում գտնուած գործակատարների հաւատարմութեանը, փողերի փոխադրութեան կամ ապրանքներ ստանալու կամ դուրս տալու համար վարձում են Պետերբուրգում, Մոսկուայում կամ Օդեսայում գոյութիւն ունեցող «գործակատարների ընկերութեան» անդամներից. դրանք կոչւում են «արտելչիկ»-ներ։

Արտելչիկների ապրուստը ցմահ ապահոված է, իսկ մահից յետոյ նրա կինը և որդիքը ապրուստի ամեն միջոցներ ստանում են այն ընկերութիւնից, որին ցմահ անդամակցել է ընտանիքի հայրը (ի հարկէ մինչև որդոց չափահաս դառնալը)։ Միևնոյն «արտելչիկի» որդիքը կրթւում են նոյնպէս ընկերութեան հաշուով։

Մի՞թէ չի կարելի Թիֆլիսումն էլ հիմնել գործակատարների ընկերութիւն, «արտել», որը ամբողջ Անդրկովկասի նշանաւոր վաճառականական քաղաքներին մատակարարէր փորձառու և հաւատարիմ գործակատարներ։ Եթէ հայ գործակատարները կունենան այդ տեսակ մի ընկերութիւն, այն ժամանակ Անդրկասպեան երկրում գործակատարները ստիպուած չեն լինել ենթարկուելու այն զրկանքներին, որոնց մանրամասն նկարագիրը տուեց մեզ «Նոր-Դար»-ը իւր № 134-ում։

Առհասարակ հայ վաճառականութիւնը միշտ կասկածանքով է վերաբերւում դէպի իւր գործակատարի հաւատարմութիւնը և որովհետև խորին համոզմունքով հաւատացած է, որ բոլոր գործակատարներն էլ առանց գողութեան չեն ապրում, այդ իսկ պատճառով էլ աւելորդ են համարում նրան լաւ վարձատրել։ Ի հարկէ, վաճառականութիւնը չի սխալւում, կան և գող գործակատարներ, որոնք որքան էլ որ փոքրաթիւ լինին, այնուամենայնիւ արատաւորում են ընդհանուր գործակատարութեան անունը։ Բայց եթէ գոյութիւն ունենայ «Հայ գործակատարների ընկերութիւն», եթէ այդ ընկերութիւնն երաշխաւորէ վաճառականի մօտ իւրեն անդամակցող գործակատարի մաքրութիւնը, հաւատարմութիւնը, այնպէս՝ ինչպէս երաշխաւորում են Ռուսիայում գոյութիւն ունեցող ընկերութիւնները, այն ժամանակ, հաւատացնում ենք, վաճառականը կասկածանքով չի վերաբերուել դէպի իւր գործակատարի հաւատարմութիւնն և ըստ արժանաւորութեան էլ կըվարձատրէ։ Իսկ հիմնել վերոյիշեալ տիպի ընկերութիւն, կընշանակէ ապահովել գործակատարների ապրուստը և նրանց փողոցներ չափելու առաջն առնել։ Ընկերութիւն հիմնելու գործը շատ շուտով կարելի է յաջողեցնել, եթէ միայն գործի գլուխ կանգնեն լուրջ և գործակատարների ներկայով և ապագայով հետաքրքրուող անձնաւորութիւններ։ Իսկ ովքե՞ր կարող են լինել այդ անձնաւորութիւններն եթէ ոչ իրենք վաճառականները. որոնց սրտին աւելի մօտիկ պիտի լինի «գործակատարների ապահովութեան» խնդիրը, եթէ ոչ հենց գործակատարների «խազեայիններին»։

Տ. Խօջաթումանեանց

Թիֆլիս, 1-ն սեպտեմբերի։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

—

Կ. ՊՈԼԻՍ, 26 օգոստոսի։

Մի երկու շաբաթ առաջ, Երզնկայի մօտ բանակող զօրքը, մի տեղից միւսը փոխադրուած ժամանակ՝ ճանապարհին հանդիպում է մի խումբ մարդկանց և զօրքի գնդապետը՝ ճանաչելով որ եկողները հայեր են, կարծես քէֆի համար հրացան է պարպել տալիս նրանց վրայ։ Մէկ հոգի նրանցից մեռնում է, սակայն միւսներն ինքնապաշտպանութեան համար, իրենք էլ սկսում են հրացան պարպել և սպանում են մի քանի զինուորներ։ Գնդապետը կատաղում է նրանց համարձակութեան վրայ և հրամայում է սպանել ամենքին։ Հրամանը կատարւում է, մի քանի հոգի սպանւում են, իսկ միւսներին յաջողւում է փախչել։

Այս դէպքի վրայ, կառավարութեան հրամանով չորս կողմից զօրքեր է ուղարկւում Երզնկա, որոնցով այժմ լիքն են բոլոր գիւղերի տները։ Այդ զօրքերն ամեն չարիք գործում են, այրում, քանդում, կողոպտում և բռնաբարում են, ոչ թէ ծածուկ, այլ բացարձակ։

Լսում ենք, որ Երզնկայի նահանգից տասնեակ հազարաւոր ստորագրութեամբ մի հանրագիր է ուղարկուած եւրոպական պետութիւններին, նրանց մարդասիրական ուշադրութիւնը հրաւիրելով իրենց խղճալի կացութեան վրայ։

⁂

Սասունի մէջ ևս նորանոր չարիքներ են գործուած հետևեալ պարագաների մէջ, որով կէտ առ կէտ կատարւում է մեր գուշակութիւնը։

Նախ քան Շաքիր փաշայի Թրքահայաստան գնալը, նա մասնաւոր կերպով յանձնարարում է քիւրդ ցեղապետներին ու չէյխերին, որ բոլոր վրանաբնակ քիւրդերին տեղափոխեն Սասուն և բնակեցնեն հայերի սեպհականութիւնների վրայ։

Սրանք կատարում են փաշայի հրամանը և թափառական քիւրդերի մի ահագին բազմութիւն յետները ձգած, քէֆով ու մուզիկայով ներս են մտնում Սասուն և հաստատւում հայ գիւղերում։ Սասունցի հայ մնացորդները, որոնց վիճակի դառնագոյն լինելու մասին անգլիական հիւպատոսներից մէկը մի սրտաճմլիկ տեղեկագիր է ղրկել լորդ Սոլսբըրիին, այդ մնացորդները, ժողովելով իրենց վերջին ոյժերը, դիմադրել են քիւրդ խուժանին, բայց անօգուտ։

Այսպէս գլխաւոր կոմիսարութեան «բժիշկ» Շաքիր փաշան մտածած է եղել խոզերին գորգի վրայ նստացնելով Հայաստանը «բարեկարգել». բայց յայտնի է, որ խոզին ոսկեհուռ գորգի վրայ էլ բազմեցնես, նա տղմի մէջ թաւալել կըձգտի, որովհետև գորգի մասին գաղափար չունի։

Ասում են կառավարութեան հեռագրով Շաքիր փաշան յետ է կանչուած։

Արդէն գրել եմ ձեզ որ նրա գնալու դէմ երեք պետութիւնների դեսպանները հենց այն ժամանակ բողոքեցին Բ. Դրան։

Mars.

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

—

Կ. ՊՈԼԻՍ, 23 օգոստոսի։

Նախընթաց նամակիս չգիտեմ հաղորդել էի ձեզ, որ Անգլիայի դեսպանը Բ. Դրան հետ իւր յարաբերութիւնները կտրելու սահմանին է հասցրել։ Կան տեղեկութիւններ, որ ես չեմ հաղորդում, գիտենալով, որ «Նոր-Դար»-ը գործին ծառայող թերթ է և չի կամենայ գործն իրեն ծառայեցնել, ինչպէս որ այդ անում են զանազան թերթեր, որոնք հետաքրքրելի դառնալու նպատակով սուտ և անտեղի լուրեր են հաղորդում։

Կան այնպիսի դեռ չիրագործուած լուրեր, որոնց հրապարակութիւնից յետոյ գործը բոլորովին հակառակ, ոչ ցանկալի ընթացք է ստանում, շնորհիւ վաղաժամ հրապարակուած լուրերի։

Այստեղ եկող և գործել ուզող թղթակիցը, մանաւանդ երբ հայ թերթի թղթակից է, պէտք է, եթէ գործի համար է եկել, շատ խոհեմութեամբ և աչալրջութեամբ գործէ։ Ինձ ասացին, որ Թիֆլիսի մի հայ թերթի (անունը չեմ կարողանում յիշել) նորեկ և երեք անփորձ թղթակիցն այստեղ իրեն պահել չիմանալով հանդերձ իւր թղթակցութեան մէջ «Նոր-Դար»-ի Պոլսից ընտացած թղթակցութիւնների վրայ բռնանալ է ձգում և իբրև թէ ինքը եւրոպական աղբիւրներից է քաղում իւր տեղեկութիւնները։ Ես այդ թղթակցին չտեսայ և ոչ մէկ անգամ, իմացայ, որ նա կրկնել է այն, ինչ որ Պոլսից վաղուց հաղորդուած է «Նոր-Դար»-ին, իւր կողմից աւելացնելով այն, ինչ որ չէ եղած, այլ միայն իւր երևակայութեան ծնունդ է։

Ես շատ ցաւում եմ, որ այսպիսի ժամանակ այդպիսի թղթակիցներ են գալիս այստեղ։

Այդպիսիները ոչ իրենք կարող են այստեղ յաջողանք ստանալ և ոչ էլ օգուտ բերել այն թերթին, որին թղթակցում են։

Բայց դառնանք գործին։

Պատմեմ ձեզ մի դէպք, որ ցոյց է տալիս թէ թիւրքերն ինչ են ուզում և ինչ են ստիպուած անելու։

Երբ Ռօզբերիի մինիստրութիւնն ընկաւ և կառավարութեան ղեկն անցաւ մարքիզ Սոլսբըրիի ձեռքը, Լոնդոնի թրքական դեսպան Ռուստեմ փաշան շտապեց ներկայանալու Սոլսբըրիին Սուլթանի կողմից նրա տարած յաղթանակին և կառավարութեան գըլուխ անցնելը շնորհաւորելու։ Ի հարկէ այդ դէպքում քաղաքականութեան մասին խօսք չի կարող լինել։ Ռուստեմ փաշայի առելեան թրքական փաղաքշական և շողոքորթ խօսքերին անգլիական պետը, իբրև ջենտլմէն պիտի ասէր, որ ինքը Թիւրքիայի բարեկամն է և այլ այդպիսի բաներ։ Բայց արի տես, որ այդ բառերին թրքական դեսպանն իւր ուզած մեկնութիւնը տալով, իսկոյն հեռագրում է այստեղ կայսերական պալատը, թէ Սոլսբըրին Թիւրքիայի բարեկամ է և թէ խոստացել է պաշտպանել Թիւրքիան։

Այդ բառերից յուսադրուած Թիւրքերը սկսեցին օրական 30—40 հայ բանտարկել և խստութեամբ վերաբերուել դէպի հայերը։ Այդ ժամանակ ամենքս զարմացել էինք թէ որտեղից առաւ թիւրքն այդ ոյժը, ո՞վ քաջալերից նրան։ Սակայն այդ բանտարկութեանց լուրերը Անգլիա հասնելով և լրագրերը այդ մասին լուրեր հաղորդելով, երբ Սոլսբըրին լրագրերի մէջ կարդում է, որ Ռուստեմ փաշային խոստացել է պաշտպանել Թիւրքերին և թէ այդ յուսով Թիւրքերը սկսել են աւելի չարչարել քրիստոնեաններին։ Սոլսբըրին իսկոյն հեռագրում է այստեղի անգլիական դեսպանին, որ ներկայանայ սուլթանին և պահանջէ բանտարկեալ հայերի արձակումը, հակառակ դէպքում ստիպուած պիտի հրատարակէ «կապոյտ գիրքը»։ Դեսպանը ստացած հեռագրական հրահանգի համեմատ ներկայացաւ սուլթանին և իւր ներկայութեամբ խմբագրել տուեց բանտարկուածներին արձակելու հրամանները, որոնք հեռագրով ուղարկուեցան գաւառները։

Ինչպէս գիտէք, Շաքիր-փաշան գնաց իբրև գլխաւոր կոմիսար Հայաստան իւր հետ տանելով երբեմն Թիֆլիսի հիւպատոս Համիդ բէյին (?), Դանիէլ բէյին և ուրիշ անձեր։ Դրա դէմ պետութիւնները բողոքեցին։ Դեսպանները այդ խնդրի համար կտրած էին իրենց յարաբերութիւնները Բ. Դրան հետ։

Այս վերջինս իւր կողմից ամեն միջոց գործ դրեց, որ յարաբերութիւնները վերականգնի։ Սուլթանի գահակալութեան տարեդարձի նախընթաց օրը դեսպաններն աւստրիական դեսպանի առաջնորդութեամբ մի տեսակ ultimatum ներկայացրին, հիմք ունենալով բեռլինեան դաշնագրի 61-րդ յօդուածը և պահանջեցին պատասխան 24 ժամ ժամանակամիջոց տալով։ Մեծ վեզիր Սայիդ փաշան և արտաքին գործերի մինիստր Թիւրխան փաշան պատասխանեցին դեսպաններին, թէ չեն կարող 24 ժամուայ մէջ պատասխան տալ և ներկայացրին իրենց հրաժարականը։ Սուլթանը չընդունեց հրաժարականը և բարկացած ասաց, որ երկուսին էլ կաքսորէ։ Այդ գիշերը Եըլըզի պալատում խառնաշփոթ ժողով կար. Թիւրխան փաշան յուզուած, արտասուքն աչքերին դուրս է եկել պալատից և շտապով նստելով անմիջապէս գնացել է դեսպաններին աղաչել աղերսել, որ 24 ժամուայ փոխարէն 8 օր ժամանակ տրուի։ Վերջ ի վերջոյ, այդ ութ օրը տրուեցաւ և մի քանի օրից պատասխանն է սպասւում։ Ես այն կարծիքին եմ, որ այս անգամ էլ ոչինչ չի լինելու, դա երեք ժամանակ վաստակելու համար է։

Այդ խաղը նոր չէ, ռուս-թրքական պատերազմից առաջ էլ այդպէս էին անում։ Նորից հրաման կըհրատարակուի թէ «դուստուր», թրքական պարլամենտը պիտի բացուի։ Իմացէք, որ Միդհատ փաշայի հնարած պարլամենտը վերացրած չէ մինչև օրս և ոչ մի կարգադրութեամբ, այլ դադարեցրած է։ Այդ երևում է և սուլթանի իրադէներից։ Իւրաքանչիւր իրադէի մէջ այժմս կըգտնէք և այս խօսքը՝ պարլամենտի հաւանութեան ներկայացնելով։

Այդ խաղը ո՞ւր է տանում Թիւրքիային՝ դէպի ներքին խառնակութիւն թէ պատերազմ։ Մի ժամանակ, Թիւրքիան աչքի առաջ ունենալով, Բիկոնսֆիլդը ասել է, թէ պատերազմը յանկարծ պիտի ծագի։ Արդեօք մօտիկ ենք այդ ժամանակին։

Հայաստանի դրութիւնը ձեզ քաջ յայտնի է։ Մակեդոնիայում եռ է գալիս և ինչ որ պատրաստւում է. բուլղարներն այրել են թիւրք գիւղեր և, լուրերին նայելով, զանազան չարագործութիւններ են արել, երկու կողմից յարձակումներ, սպանութիւններ. մէկ տեղ էլ ապստամբ բուլղարներից 80 հոգի ստիպուած անձնատուր են եղել Թիւրքերին, 40 հոգի դրանցից յանձնուել են զօրքին անելու նրանց հետ այն, ինչ որ կամենան։ Էլ աւելորդ է ասել թէ ինչ եղան այդ խեղճերը, իսկ մնացած 40 հոգուն բերեցին այստեղ և ծովի տակ կըգտնեն նրանք հանգիստ։

Մի երկու խօսք էլ Սսի կաթողիկոսութեան մասին և կըվերջացնեմ այս նամակս։ Այդ կաթողիկոսական խնդիրը դեռ փակուած չէ։

Հայոց ս. պատրիարքը քանի ամիս է աշխատում է, որ ազգային ժողով գումարելու հրամանը ստանայ, որպէս զի այդ ժողովին ներկայացնէ կաթող. ընտրութեան տեղեկագիրը, ստանայ դրա վաւերացումը, իսկ յետոյ ստանայ կառավարութիւնից «բէրաթ», բայց ոչինչ չէ ստացւում։

Այս օրերս ս. պատրիարքն անգլիական դեսպանին դիմելով, դեսպանը այդ մասին խօսում է մեծ-վեզիր Սայիդ փաշայի հետ։

Այս վերջինս, գործը յետ ձգելու դիտաւորութեամբ, դեսպանին հաւատացնում է, որ 18 տարի եղած հրամանագրի օրինակը թղթերի մէջ չեն գտնում, որ ըստ այնմ հարկաւոր թուղթը գրուի։

Այդ պատճառով, ինչպէս ինձ հաղորդեցին, հայոց պատրիարքարանից Բ. Դուռն է ուղարկուած թէ ճէշ-էէ օրինակը և թէ իւր ժամանակին հանգուցեալ Ալի-փաշայի հրամանագրի պատճէնը։

Amicus.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանական սոցիալիստները ֆրանսիական սոցիալիստներին ղրկել են մի ուղերձ, որ, մէջ իրենց համակրութիւնը յայտնելով նրանց, ի միջի այլոց հետեւեալն են ասում.

«Սեդանի 25 ամեայ տարեդարձին մենք բողոքում ենք պատերազմի և ազգամոլութեան դէմ և ձեռք ենք մեկնում ֆրանսիացի սոցիալիստներին։ Կեցցէ ազգերի համերաշխութիւնը»։

—

Ռումինիայի իշխանութիւնը Կիւստենդիլում մի գաղտնի կոմիտէտ է գտել, որ բաղկացած է եղել մակեդոնացի 60 բուլղարներից և որը 45 հոգուց բաղկացած մի ապստամբական խումբ է ղրկել ի տնօրինութիւն Սոֆիայի մակեդոնական յեղափոխական կոմիտէտի։ Դատական իշխանութիւնը բոլորին էլ ձերբակալել է։

—

Ճապոնացիներն արդէն սկսել են հեռանալ Պորտ-Արտուրից։ Ասում են, որ նրանք Պորտ-Արտուրից արդէն բոլորովին հեռացած կլինին սեպտեմբերի կիսին։

—

Բոմբէյում այս օրերս մի ընդհարում է տեղի ունեցել հնդիկների և մահմեդականների միջեւ։ Պատճառն այն է եղել, որ մահմեդականները կամեցել են արգելք լինել հնդիկների կրօնական արարողութեան, որի կատարմանը վերահսկելիս է եղել տեղական իշխանութիւնը։ Ցանկարծ հրաման է արձակւում հրացան արձակելու։ Ոստիկանութիւնը կատարում է հրամանը և վիրաւորում է չատ մահմեդականների։ Ցայտնի չէ, թէ ով էր հրամայողը հրացան արձակել։

—

Աւստրիական էրցհերցոգ Ֆրանց-Ֆերդինանդ դ'Էստէի առողջութիւնը վերջին ժամանակներս փոքր ինչ լաւացել է։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Համլէտը» չինարէն. — Պեկինի գիտութեանց ճեմարանի դիրեկտորը «Համլէտը» թարգմանել է չինարէն և չինական կայսերական դերասանական խումբը չուտով կըներկայացնէ Շեքսպիրի ողբերգութիւնը։

—

Պատտիի հարստութիւնը.—Հռչակաւոր երգչուհի Ադելին Պատտիի ամուսինը, սենիօր Նիկոլինին, «Chicago Indicator» թերթի մէջ յայտարարում է, թէ իւր կնոջ հարստութիւնը, երբ նա վերջին անգամ բեմ ելաւ Շիքագոյում «Տրաւիատա» օպերայի մէջ, հասել է մօտ 200,000 ֆունտ ստեռլինգ։ Այդ հարստութեան վրայ եղել է 3,700 չղակն, որոնցից ոչ մէկը վեց կարատից պակաս չի կչռել։

—

Նոր պիէս.—Սարդուն մտադիր է մի նոր պիէս գրել «Օֆելիա» վերնագրով։ Նիւթն առել է միստրիս Մոնֆորտ դերասանուհու կեանքից, որ XVIII դարում Լոնդոնի հասարակութեան և արքունիքի սիրելին էր։ Նա թողել է բեմը, սիրահարուելով մի երիտասարդի վրայ։ Բայց մի քանի ամսից յետոյ նրա սիրահարը ձգել էր նրան և խեղճ դերասանուհին վշտից խելագարուել էր։ Գեղեցկուհուն փակեցին գժատան մէջ։ Մի անգամ, երբ խելքը փոքր ինչ գլուխն էր եկել, նա հարցրեց իւր սպասաւորներից մէկին, թէ ինչ են ներկայացնում թատրոնում։ Պատասխան ստացաւ, թէ—«Համլէտը»։ Այդ պիէսում միստրիս Մոնֆորտը միշտ ահագին աջողութիւն էր ունենում Օֆելիայի դերում։ Այդ դերի մասին յիշողութիւնը վերակենդանացաւ նրա մէջ... և նա, միջոց գտնելով փախչելու գժատնից, վազեց թատրոն և թագնուեցաւ բեմի վրայ, կուլիսների ետեւը։ Այդպէս թագնուած մնաց, մինչեւ որ հասաւ Օֆելիայի խելագարութեան տեսարանը։ Այն ժամանակ թչուառ նախկին դերասանուհին դուրս եկաւ բեմ և յիչեալ տեսարանն այնքան ազդու և բնական կատարեց, որ դահլիճը երկար ժամանակ թնդում էր գոռ ծափահարութիւններից։ Բեմից դուրս գնալով, նա ընկաւ յատակի վրայ աղաղակելով «ամեն ինչ վերջացաւ» և այնուհետեւ չուտով մեռաւ։ Սարդուն մտադիր է պիեսի վերջում դերասանուհու և իւր դաւաճան սիրահարի տեսակցութեան տեսարան մացնել։

Խմբագիր հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԽՆԴՐՈՒՄ Է բաժանորդներից, որոնց վրայ ներկայ և անցեալ տարիներից պարտքեր են մնում կամ որոնց մօտ «Նոր-Դար»-ին հասանելի գումարներ են գտնւում—բարեհաճեն վերջապէս ուղարկելու իրեն։

Վարչութիւնը «Նոր-Դար»-ի վրայ առատաձեռն ծախքեր անելով և բոլոր թերթերից աւելի շատ հաւելուածներ լոյս հանելով իրաւունք ունի սպասելու, որ թերթի պարտականներն իրենց պարտաւորութիւնը չեն գլանայ կատարելու։



Անդրկովկ. երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիսից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Պոստային գնացքը Թիֆլիսից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7. ժ. 30 ր.։

Պոստային գնացքը Թիֆլիսից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիս հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Պոստային գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիս է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Պոստային գնացքը Բագուից Թիֆլիս դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս է հասնում ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիս-Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր., հասնում Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիս դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին, հասնում է Թիֆլիս առաւօտեայ 7 ժ. 35 րոպէին։

Ժամանակաւոր մարդատար գնացքը Թիֆլիսից Բորժոմ դուրս է գնում ցերեկուայ 3 ժամին և հասնում է Բորժոմ երեկոյեան 8 ժամին և 35 ր.։

Ժամանակաւոր մարդատար գնացքը Բորժոմից Թիֆլիս դուրս է գալիս գիշերուայ 1 ժ. և 25 ր. Թիֆլիս հասնում է առաւօտեան 8 ժամին և 15 րոպէին։

Ժամանակաւոր մարդատար գնացքը Միխայլովից Սուրամ դուրս է գալիս երեկոյեան 7 ժ. և 30 ր.։

Պոստ. երթ. Ռազմա-վրական ճանապարհով

Թիֆլիսից հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորւում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորւում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորւում է առաւօտեայ ժամը 8 ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիս է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորւում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիս հետեւեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։



Ռուսաց Շոգ. Ընկ.

Ամեն շաբաթ շոգենաւերի երթեւեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պոլսի միջեւ

Բաթումից դուրս է գնում

Շաբաթ օրերը լոյս կիրակի, գիշերուայ 3 ժ., չրջանաւոր ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով. Նովորոսիյսկի, Կերչի, Թէոդոսիայի, Եալտայի, Սեւաստոպոլի և Եւպատորիայի վրայով։

Երեքշաբթի օրերը՝ լոյս չորեքշաբթի, գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար չոգենաւը բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը՝ լոյս հինգշաբթի, գիշերուայ 4 ժամին, չրջանաւոր ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Օդեսայից գալիս է Բաթում

Երկուշաբթի օրերը առաւօտեան՝ ուղիղ ընթացքով։

Չորեքշաբթի և Ուրբաթ օրերը, երեկոյեան չրջանաւոր ընթացքով։

Երկուշաբթի օրերը, գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար չոգենաւը չրջանաւոր ընթացքով։

Գործակալութիւնը գտնւում է Թիֆ. Կալ. բանկի գալերէյում №№ 117—118

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՈՏԵՐԻ ԿԱՐԱՄԵԼ
Հազի դէմ
„ԿԵՍՏԻ ԲՈՍՍ“
Բ. ՍԵՄԱԴԵՆԻ ԿԻԵՒՈՒՄ
Գլխաւոր պահեստը Լեքսանդր Վենցելի մօտ, Պետերբուրգում, Բոլոխովկայա, 33, Վաճառւում է Ռուսիայի բոլոր դեղատներում և դեղատ. խանութներում։
Գին է մէկ արկղիկով 25 կոպէկ։
(Մ.) 20—18

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է
ՍԱՊՈՆ „ՄԻՍՍ“ գերազանց յատկութեան և հաճելի է գործածելիս
Ս. Պ. Բ. ՏԵԽՆՈ-ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ
Գլխաւոր պահեստները. С.-ПЕТЕРБУРГЪ, Александр. площ. 9. МОСКВА, ВАРШАВА.
(Մ.) 7—1.

Թիֆլիսի Հայոց Կոնսիստորեան սոյն սեպտեմբեր ամսի 11-ին իւր ատեանի մէջ աճրդով պէտք է տալ վարձու կըզդի կոչեցեալ եկեղեցական կալուածքը՝ որը գտնւում է Վանքի աւագ եկեղեցւոյ հանդէպ առանց կրկնաճրդի։
Անդամ Կոնսիստորիայի Համազասպ վարդապետ
(691) 3—1

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառւում են Գրիգորիս Երզնկեանցի՝
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ . . 1 ռուբլի։
ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Թօվմէրի, ղասագիրք, լեռնեից իջեցրած 30 կ.
ԴԱՍԱՒԱՆԴՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ, երեսունից . « 20 կ.
(689) 2—2

Սրանով յայտնում եմ ի գիտութիւն հայ հասարակութեան, որ ներկայ սեպտեմբերի 1-ից, ընդունւում են ՁՐԿԻՆՆԵԱՆՑ Սուրբ Կարապետ եկեղեցւոյ միջասեան ծխական ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ նաև օրիորդներ։ Ցանկացողները կարող են դիմել ինձ ներկայացնելով ծննդեան և ծաղկի վկայականները խնդրագրով։
Նախագահ հոգաբարձութեան՝ Ներսէս աւագ քահ. Տէր-Բարսեղեանց։
(690) 2—2.

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ եւ ՊԱՆՍԻՕՆ
Վ. Ա. ԳՐԻՆԵՒԱՅԻ
(նախկին ԴՐՃԵՒԱՁ-ԿՈՎԱՁԻ)
Ընդունւում են երկու սեռի երեխաներ իբրև գիշերօթիկ, կիսագիշերօթիկ և երթևեկ, պատրաստելու համար միջնակարգ դպրոցների ստորին դասարանները մտնելու։ Բացի պարտադիր առարկաներից երեխաները սովորում են Ֆրանսերէն և երգեցողութիւն ըստ ցանկութեան և առանձին վճարով։ Ծաւճաւաձեւսկայա փ. №5,
(361) 15—5

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Թիֆլիս, Նազարեւսկա փողոց, № 9
Ցանկացողք ունենալ իրենց առևտրական գործերի համար անցեալ յունիս ամսում ուսման ընթացքն աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուից հաստատուած ծրագրի համեմատ, և ունին օրէնսդիր արտօնութիւններ։
Ընդունելութիւնները սկսուելու են սեպտեմբերի 1-ից։ Կուրսերի ծրագիրն և կանոնները կարելի է ստանալ չնչին գնով. Ծովեանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, учредителю Коммерческихъ Курсовъ С. П Мануэльянцу.
(668) 12—8

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ԵԱԿՈՐ“
Բարձրագոյն հաստատուած 1872 թուին։
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ 2.500.000 ր.
Բացի պահեստի գումարներից
ԿՐԱԿԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
ամեն տեսակ շարժական եւ անշարժ կայքերի.
ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
ծովային, գետային եւ ցամաքային այլ եւ ապահովագրութիւն նաւերի
ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
առանձնապէս ձեռնտու պայմաններով եւ արտօնութիւններով ի դէպ աշխատանքի անընդունակ դառնալուն:
Օրինակ.—30 տարեկան անձն ապահովագրւում է 10,000 ր. դրամագլխի, որ պէտք է տրուի իւր մահից յետոյ, երբ էլ մահը վրայ հասնելու լինի։ Այդպիսի ապահովագրութեան համար նա պէտք է իւրաքանչիւր 4 ամսում վճարէ 78 ր., եթէ ցանկանում է արտօնութիւններ ունենալ աշխատանքի անընդունակ դառնալու դիպուածում։ Այս ապահովագրութիւնն իրական ապահովութիւն է այն անձերի ընտանիքների համար, որոնք միջոցներ են ձեռք բերում անձնական աշխատանքով, որովհետև ապահովագրուած անձի աշխատանքի անընդունակ դարձած դիպուածում տրուող դրամագլուխը ապրուստի միջոցների համար նեցուկ է։
Ապահովագրութեան համար յայտարարութիւններն ընդունւում և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդւում են Ընկերութեան Գլխաւոր Վարչութեան մէջ Մոսկուայում, Ընկ. Կովկասի Վարչութեան մէջ՝ Թիֆլիսում (Վելեամինովսկայա փ. տ. № 2) և գործակալութիւնների մէջ՝ Կայսրութեան բոլոր քաղաքներում։
Հասարակութեան յարմարութեան համար ապահովագրութիւնների ընդունելութիւնը բացուած է Կուկիայում, 3-րդ հաշտարար դատարանի կողքին, տ. Ալիխանի, Ֆեօդոր Ալէքսանդրովիչ Իվանովի բնակարանում։
(336) 100—51

Тифлисъ Доз. Цензурою 1-го Сентября 1895 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А. О. Меликъ-Шахназаріанца Воронц. Набережн. Церковный домъ